ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«14» 02 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 06

Ձեռնարկողը՝ ***«Ճաննախագիծ» ինստիտուտ ՍՊԸ***
Ք. Երևան, Աճառյան 54Բ

Գործունեությունը՝ ***Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր. Տրանշ-2 Աշտարակ-Թալին ճանապարհի ուղեծրի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 06

«14» 02 2019թ.

<<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր. Տրանշ 2 Աշտարակ-Թալին ճանապարհի ուղեծրի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության

Ձեռնարկող՝	<<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	ՇՄԱԳ հաշվետվություն և կից նյութեր
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ
Գործունեության կատեգորիան	/Ա/ կատեգորիա

Ներկայացվող գործունեությունը նախատեսում է Տրանշ 2. Աշտարակ-Թալին ճանապարհի 8կմ հատվածի տեղափոխում, որի նպատակն է շրջանցել տեղանքում առկա հնագիտական համալիրը:

Աշտարակ-Թալին ճանապարհի շինարարության կապալառուն «Կորսան-Կորվիամ կոնստրուկսիոն» իսպանական ընկերությունն է: Պատվիրատուն՝ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը:

2010 թվականին ծրագրի համար մշակվել էր նախագիծ, որի հիման վրա կազմվել էր շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն: Ըստ գործող օրենսդրության պահանջների 2011թ-ի հուլիսի 22-ին ստացվել էր թիվ ԲՓ-65 դրական փորձաքննական եզրակացություն:

2013թ. հուլիսից ընթանում են հնագիտական պեղումներ, հողային և ենթակառուցվածքների նախապատրաստման աշխատանքներ: Բետոնե ծածկի աշխատանքները մեկնարկել են 2016թ. ամռանը: Ընդհանուր աշխատանքների ավարտը նախատեսվում է մինչև 2019թ. հունիս:

Աշխատանքների ընթացքում բացահայտվեց, որ Ագարակի հնագիտական համալիրը կարող է վնասվել ճանապարհի շինարարության արդյունքում և կայացվեց որոշում՝ փոխել մոտ 8կմ հատված, որպեսզի ապահովվի հնագիտական համալիրի անվտանգությունը:

Մայրուղու փոփոխված ծրագիծը քննարկվել և համաձայնեցվել է մշակույթի նախարարության պատասխանատուների հետ, նախարարությունը չի առարկում փոփոխված ծրագծի վերաբերյալ ներկայացված առաջարկին:

"Հյուսիս-հարավ'' ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի" շրջանակներում կառուցվող Աշտարակ–Թալին ճանապարհն ամբողջությամբ գտնվում է Արագածոտնի մարզի տարածքում:

«Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր» Տրանշ 2-ի Մ1 Երևան-Գյումրի-Բավրա մայրուղին իրենից ներկայացնում է 100կմ/ժ հաշվարկային արագությամբ արագընթաց ճանապարհ: Կատարվել է տեղանքի երկրաբանական և գոյություն ունեցող կոմունիկացիաների ուսումնասիրություններ, որոնց հիման վրա են նախագծվել աշխատանքները:

Տրանշ 2 ծրագիրը սկիզբ է առնում 29+600 կմ-ից՝ Աշտարակում և ավարտվում է 71+500 կմ վրա՝ Թալինում: Ծրագրի շրջանակներում երկգոտիանոց մայրուղին վերածվելու է չորս գոտիանոց ավտոմայրուղու (բաժանիչ գոտիով)՝ 41.900կմ ընդհանուր երկարությամբ:

Մայրուղին հատում-անցնում է 10 կիրճ, որոնցից միայն չորսն են պարունակում մշտական ջրհոսք, մնացածը՝ սեզոնային են:

Ճանապարհը նախագծվել է ըստ հետևյալ չափորոշիչների՝ բարելավված ճանապարհային ցուցանակներ, նշաններ, անվտանգություն, ջրահեռացման համակարգեր, վաքեր, կողնակներ և 9 բարդ ճանապարհային հանգույցներ: Գոյություն ունեցող հողային պաստառի որոշ հատվածներ, որոնք կառուցվել են շուրջ 30 տարի առաջ, կառուցվածքային առումով չեն համապատասխանում տեխնիկական պահանջներին, շարքից դուրս են եկել, և, հետևաբար, վերակառուցվելու են և արդյունքում կձևավորվի նոր չորս գոտիանոց ավտոմայրուղի՝ բաժանիչ գոտիով: Նախագծումը ներառում է երթևեկելի մասերի բաժանիչ գոտիի և կողնակների բարեկարգում: Կանաչապատման առավելությունները/օգուտները ներառում են էկոլոգիական արժեքի բարձրացում, ավելորդ ջրի ներծծում, տեղանքի բարեկարգում՝ էսթետիկ տեսանկյունից, ինչպես նաև՝ աղմուկի որոշակի խլացում:

Ճանապարհի նախագիծը ներառում է համայնքներին հասու դարձնել արդեն գոյություն ունեցող ճանապարհը, ինչպես նաև նոր մայրուղուց երկու ուղղությամբ էլ օգտվելու հնարավորություն տալ:

Փոփոխված ծրագիծն անցնում է հետևյալ համայնքներով՝ Ոսկեվազ, Ագարակ և Աղձք: Նոր ծրագիծը կսկսվի 29+934կմ-ից և ավարտվելու է 36+200կմ-ում (նախկինում՝ 32+600կմ-ի փոխարեն):

Ճանապարհն ունի 4 երթևեկելի գոտի: Նախագծով նախատեսված է 26.6 մ լայնությամբ հողային պաստառ, որից բետոնե ծածկը կազմում է 21.4մ: Երկայնական առավելագույն թեքությունը 5% է, հորիզոնական կորերի նվազագույն շառավիղը 1000 մ է: Հաշվարկների համաձայն տվյալ հատվածում հանույթի ծավալը կկազմի մոտ 1191 751 մ^3, իսկ լիցքինը՝ 907100 մ3:

Նոր նախագծվող ճանապարհի կմ 31+967-ում առկա է մեկ տրանսպորտային հանգույց: Ծրագիծն հատող բոլոր կոմունիկացիաների համար նախատեսվել է տեղափոխում:

Նախագծով նախատեսված է 2 հատ ուղեանց, որոնք երկաթբետոնյա են, ունեն երկու թռիչք՝ 18 մ երկարությամբ: Ուղեանցների երկարությունը միասին կազմում է 72 մ:

Փոքր ձորակներում անձրևաջրերի և ձնհալքների, ինչպես նաև երթևեկելի մասի ջրահեռացումը ապահովելու համար ճանապարհի երկայնքով նախատեսված են մոտ 40 խողովակներ: Բոլոր արհեստական կառուցվածքները կառուցվելու են միջազգային նորմերի հիման վրա: Անմիջապես Ագարակի հատվածում, որտեղ կան մեկ չոր և մեկ գարնանային գետակ, նախատեսված է են եկրու խողովակ:

Ճանապարհային նշանները, գծանշումը և արգելափակոցները նախատեսված են հաշվարկային արագությանը՝ 100կմ/ժ, համապատասխան: Երթևեկության

մասնակիցների հարմարավետության համար նախատեսված են անհատական տեղեկատվական նշաններ: Երթևեկության անվտանգության կազմակերպումը կատարված է համապատասխան գործող նորմերի.

- Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը՝ 2 տարի, 5 օր/շաբաթ, 8ժամ/օր:

- Հողային աշխատանքներ. հանվող հողի և գրունտի ծավալը՝ 1230943մ^3, որից 873772մ^3 օգտագործվելու է որպես ետլիցք, մնացորդը՝ 357171մ^3 ամբողջությամբ օգտագործվելու է ճանապարհի ներքին և եզրային շերտերի ձևավորման համար: Շինարարության ընթացքում հողային զանգվածներ չեն հեռացվելու և նոր հող չի ներկրվելու: Շինարարական աղբը նույնպես օգտագործվելու է ներքին շերտերի համար:

- Փոփոխված ծրագծի երկայնքով նախատեսված են՝ 4 հատ 6x4.5մ բացվածքով գյուղտեխնիկայի անցում, 2հատ 2x18մ թռիչքներով ստորգետնյա գյուղտեխնիկայի անցում, 1հատ 5x3.0մ բացվացքով անասնաանցում, ճանապարհային հանգույց 1 հատ տեաձև հատումով և 1հատ 2x18մ թռիչքներով էստակադայով:

Ճանապարհի հիմնական մասը ծածկվելու է բետոնի շերտով, սակայն երթևեկելի որոշ մասեր՝ անցումների վրա, ասֆալտապատվելու են: Ասֆալտապատման համար օգտագործվելու են.

- մանր հատիկավոր ասֆալտային խառնուրդ՝ 162 մ^3,
- խոշոր հատիկավոր ասֆալտային խառնուրդ՝ 185 մ^3,
- խճային խառնուրդ՝ 115 մ^3:

  Ընդամենը՝ 462 մ^3:

Գնահատվել է շինարարական, ավարտական և շահագործման փուլերում հնարավոր ազդեցությունները: Նախագծային փուլում հայտնաբերվել են անուղղակի ազդեցություն կրող հնագիտական պեղումնավայրերը և պատմական հուշարձանները, որոնք հստակորեն սահմանված են նախնական գնահատմամբ:

Կատարվել է շինարարական աշխատանքների նախապատրաստման, շինհրապարակների կազմակերպման և բուն շինարարության ժամանակ հավանական ազդեցությունների գնահատում և առաջարկվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված են շին. ճամբարների պլանավորումը էլեկտրաէներգիայով, ջրով, սանհանգույցներով թափոնների կառավարման պլանի, շին. նյութերի պահեստավորման, հողի, ջրերի աղտոտման կանխարգելման միջոցառումների ապահովումը, արտակարգ իրավիճակների կառավարման պլանի առկայությունը, օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, հավաստագրերի ձեռքբերումը, սոցիալական հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ, մոնիթորինգի ծրագիր:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ հավանական ազդեցության մեծ մասը կլինի շինարարության փուլում: Ազդեցությունը կլինի ժամանակավոր և արդյունավետորեն կկառավարվի մեղմացուցիչ միջոցների կիրառմամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում բնապահպանական ազդեցության կենթարկվեն տարածքի բուսատեսակները, ինչպես նաև կենդանատեսակները: Ծառերն ու թփերը պետք է հատվեն և վերատնկվեն բուսական և կենդանական աշխարհին հասցվող վնասը նվազագույնի հասցնելու տեսանկյունից ամենահարմար ժամանակահատվածում:

Համաձայն ամբողջ տարածքի բուսածածկի հետազոտությունների, կատարված 2011թ., ինչպես նաև լրացուցիչ 2018 թ. կատարված ուսումնասիրության, ծրագրային տարածքների բուսատեսակները ընդգրկված չեն ՀՀ բույսերի Կարմիր Գրքում:

Ըստ փոփոխված ծրագծի տեղանքի հետազոտության արդյունքում կատարած նախնական հաշվարկների ծրագծի որոշ հատվածներում կպահանջվի կատարել ծառահատումներ: Ավտոմայրուղու ազդեցության գոտում են հայտնվել 458 ծառեր, այդ թվում մշակվող /այգեգործական/՝ 211-ը: Բոլոր տեսակի ծառերի և թփերի վերատնկման աշխատանքները նախատեսվում է կազմակերպել կամ ուշ աշնանը՝ տերևաթափից հետո, կամ էլ վաղ գարնանը, դրանք նախատեսվում է փոխարինել նոր ծառերով և թփերով՝ 1:10 հարաբերակցությամբ: Նոր ծառերը կխնամվեն 3 տարի՝ մինչև դրանց կենսունակ դառնալը: Կընտրվեն տեղական տեսակներ: Տնկումը կիրականացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայրում և կհամաձայնեցվի բնապահպանության նախարարության հետ:

Մայրուղին չի անցնում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում գրանցված և ՀՀ կառավարության որոշումներով սահմանված մշակութային ժառանգության հուշարձանների ազդեցության գոտում, բացառությամբ վերը նշված Ագարակի պատմամշակութային արգելոցի, որը և պատճառ է հանդիսանում ծրագծի սույն փոփոխման համար:

Հաշվի առնելով հանրային քննարկումների ժամանակ բնակիչների և համայնքապետերի հնչեցրած առաջարկությունը և խնդրանքը, ճանապարհի ամբողջ երկայնքով երկու կողմից նախատեսվում է իրականացնել շեպի եզրից երեք մետր լայնությամբ օտարում՝ գյուղատնտեսական տեխնիկայի և հողակտորների սեփականատերերի տեղաշարժի համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական արտանետումներն առաջանում են հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի ու տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, ասֆալտապատման արդյունքում:

Հողային աշխատանքների ժամանակ փոշու արտանետումներն առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում էքսկավատորների, ամբարձիչների և բուլդոզերների աշխատանքի ժամանակ:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում արտանետումներն առաջանում են վառելիքի այրման արդյունքում: Հիմնականում օգտագործվում է դիզելային վառելիք:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրն օգտագործվում է տեղանքի ջրցանի, հողային զանգվածի խոնավացման, ինչպես նաև, շինարարական անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

<u>Եզրահանգում</u>՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, որի ընթացքում ազդեցությունները թույլատրելի նորմերի սահմաններում են և կրում են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ մշակույթի և Արտակարգ իրավիճակների նախարարությունները, Բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, հանրությունը ներկայացրել է առաջարկություններ և դիտողություններ, որոնք հիմնականում հաշվի են առնվել: Հանրությունը և տեղական ինքնակառավարման մարմինները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

ԵԶՐԱԿԱՑՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (ներառյալ ծառահատումների և դրանց վերականգնման, ՀՀ կառավարության որոշումը՝ հողերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ):

2. Գործունեության ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

3. Ջրօգտագործումն ու ջրահեռացումն, ինչպես նաև թափոնների կառավարումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր. Տրանշ 2 Աշտարակ-Թալին ճանապարհի ուղեծրի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Ա. Դոնոյան

Գլխավոր մասնագետ Զ. Զուռնաչյան